# ՀՐԱՎԵՐ

ՇՀԱՊՁԲ-11/1

ծածկագրով շրջանակային

համաձայնագրեր կնքած բոլոր Մասնակիցներին

ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով մրցույթի շրջանակներում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության “ԱՆԱԼԻՏԻԿ” ՓԲԸ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել **Սեղմված բնական գազ՝ Պրոպան բութան**:

Ապրանքի մատակարարման պայմանները ներառված են կից ներկայացվող գնման ժամանակացույցում և տեխնիկական բնութագրում:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Կոմիտասի 29 հասցեով “ԱՆԱԼԻՏԻԿ” ՓԲԸ, II հարկ, տնօրենի ընդունարան՝ գնումների համակարգող՝ Ս. Կոպալյանին (010 27 50 73), մինչև 24. 02. 2015 թ. ժ. 14:00:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Կոմիտասի 29 հասցեով “ԱՆԱԼԻՏԻԿ” ՓԲԸ, II հարկ, տնօրենի ընդունարանում՝ 24. 02. 2015 թ. ժ. 14:00:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրի մրցույթի հրավերով սահմանված կարգով:

Հայտ պարունակող ծրարը ներկայացվում է փակ վիճակում, սոսնձված, ստորագրված և կնքված այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են 1 բնօրինակից և 1 պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտի հետ միասին ներկայացվում է նաև վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ: Ծրարի վրա պետք է կատարվեն բացառապես հետևյալ գրառումները՝

ա/ “ԱՆԱԼԻՏԻԿ” Փակ Բաժնետիրական Ընկերություն, ք.Երևան, Կոմիտասի 29

բ/ «Գնային առաջարկ» բառերը

գ/ “ՇՀԱՊՁԲ-11/1”

դ/ «Չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը» բառերը,

ե/ Մասնակցի անվանումը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը «Գնումների մասին» օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

“ԱՆԱԼԻՏԻԿ” ՓԲԸ

Գլխավոր տնօրեն Ս. Սարգսյան

“ԱՆԱԼԻՏԻԿ” ՓԲԸ գնումների համակարգող Ս. Կոպալյան